**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2026թ. թիվ 356-Ա

Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐՑԻ ԱՇԽԱՐՀԲԵԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի մայիսի 22-ի թիվ 347-Ա, ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի մայիսի 22-ի թիվ 348-Ա որոշումները և հաշվի առնելով Ս.Վարդանյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի Աշխարհբեկ Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա Վարդանյանին 2026 թվականի մայիսի 25-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի Աշխարհբեկ Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի Աշխարհբեկ Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի Աշխարհբեկ Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի Աշխարհբեկ Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ

սահմանված վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարման համար Ս.Վարդանյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարցի Աշխարհբեկ Ղազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մայիսի 22
ք.Վանաձոր